# ՊԱՏԱՆԻ ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ «ԿԱՍՊԱՐՈՎԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ»

**Կարեն Ասրյան. ծնվել է 1980 թ. ապրիլի 24-ին Երեւանում: Մինչեւ 18 տարեկանների ՀՀ եռակի չեմպիոն: 9 տարեկանում լրացրել է վարպետության թեկնածուի նորման: Մասնակցել է աշխարհի երկու առաջնությունների: 1994-ին, Սեգեդում (Հունգարիա) տեղի ունեցած մինչեւ 14 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնությունում դարձել է փոխչեմպիոն: Անցյալ տարի մասնակցել է ՀՀ մեծահասակների բարձրագույն խմբի առաջնությանը: Այդ մրցաշարում ոչ-ոքի է խաղացել գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանի, Արտաշես Մինասյանի եւ Արշակ Պետրոսյանի հետ: Մարզիչը հայրն է՝ Արարատ Ասրյանը, որը մասնագիտությամբ մաթեմատիկ-ծրագրավորող է:**

Պրոֆեսիոնալ շախմատիստների վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի նախաձեռնությամբ Մոսկվայում տեղի ունեցած միջազգային մրցաշարին մասնակցում էին 10 երկրների 36 ուժեղագույն պատանի շախմատիստներ: Հայաստանը ներկայացնում էին Կարեն Ասրյանը, Վարուժան Հակոբյանը եւ Լիլիթ Մկրտչյանը: Մասնակիցների մեծամասնությունը աշխարհի կամ Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրներ էին: Ինչ վերաբերում է Լիլիթ Մկրտչյանին, ապա նա մրցապարտեզ դուրս եկավ Գարրի Կասպարովի անձնական երաշխավորությամբ: Աշխարհի չեմպիոնը ոչ միայն իր անվան գավաթ էր սահմանել, այլեւ բազմաթիվ մրցանակներ: Ուշագրավ է, որ մասնակիցների հյուրանոցային ծախսերը, որոնք տեղավորվել էին «Կոսմոսում», ամբողջովին ստանձնել էր Կասպարովը: Կարեն Ասրյանը մեկնարկում 4 անընդմեջ հաղթանակներից հետո այդպես էլ ձեռքից բաց չթողեց առաջին տեղը: Տաղանդավոր պատանի շախմատիստը, ոչ մի պարտություն չկրելով, 9 հնարավորից 7.5 միավորով գրավեց առաջին տեղը եւ արժանացավ «Կասպարովի գավաթին»: Ընթացիկ մրցաշրջանն ընդհանրապես հաջողակ էր տաղանդավոր շախմատիստի համար: Հունվարին Մոսկվայում տեղի ունեցած Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարում նա «Երեւան» թիմի կազմում ընդհանուր ու նաեւ անհատական հաշվարկով գրավել է առաջին տեղը՝ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր: Փետրվարին մասնակցել է Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած «Պետրովի հուշամրցաշարին», որտեղ հանդես էին գալիս անվանի շատ գրոսմայստերներ եւ 2-րդ անգամ լրացրել միջազգային վարպետի նորման: Տիրելով «Կասպարովի գավաթին», Կարեն Ասրյանը իրավունք է ստացել մասնակցել միջազգային երեք մրցաշարերի, որոնց ծախսերը ստանձնելու է աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը: Ինչպես տեղեկացրեց պատանի շախմատիստի հայրը, առաջինը «Կրեմլյան աստղեր» մրցաշարն է լինելու, որը մեկնարկելու է ապրիլի 24-ին, այսինքն Կարենի հենց ծննդյան օրը:



**ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆ**

13-ամյա Վարուժան Հակոբյանը, որը ամենակրտսեր մասնակիցներից մեկն էր, նույնպես վատ հանդես չեկավ եւ վաստակեց 5 միավոր: Կարեն Ասրյանը Հայաստանի 2-րդ հավաքականի կազմում, որը համալրված է լինելու պատանի եւ երիտասարդ շնորհալի շախմատիստներով, հանդես է գալու Երեւանյան համաշխարհային օլիմպիադայում: